

**ՀԱՅՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ. ՀԱԿՈՐ
ԿԱՐԱՊԵՆՑԻ ԱՌԱՋԻՆ՝ «ԱՆԾԱՆՈԹ ՀՈԳԻՆԵՐ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ
ՀԵՏՔԵՐՈՎ**

Բանալի բառեր և արտահայտություններ. ազգային հոգեբանություն, ինքնագիտակցություն, անհատի ազատություն, մենություն, երկվություն, տարագրություն, հայրենիք, սփյուռք, ողբերգություն:

Ключевые слова и выражения: национальная психология, самосознание, свобода личности, одиночество, раздвоенность, странствие, родина, диаспора, трагедия.

Key words and expressions: national psychology, self-consciousness, freedom, solitude, duality, exile, homeland, diaspora, tragedy.

Միացյալ Նահանգներ անցնելուց հետո Հակոբ Կարապենցի համար 1950-60-ական թվականները բեղմնավոր դարձան. երիտասարդ էր, գրական ճանաչողության ներուժով, ժանրի ընտրության համաչափ բաշխումի տեսանկյունից՝ պատմվածք թե՛ վեպ, արդյունավոր էր գրիչը՝ ամերիկյան հիսնականների գրական շնչառության նկատելի ներգործության տեսակետից: Նրա պատմվածքների առաջին հատորը՝ «Անծանօթ հոգիները», ըստ էության՝ ամփոփեց ստեղծագործական առաջին շուրջ երկու տասնամյակների արդյունքները. շփումը նոր քաղաքակրթության հետ էր, ուր միջավայրն ու մարդիկ՝ «հոգիները», անհաղորդ էին, ավելի պարզ՝ «անծանոթ»՝ իբրև քաղաքակրթության նոր սանդղակ: Ո՞րն է նրա համար հինը՝ «ազգայինը», թերևս այո՛, այդ դեպքում ո՞րն է նորը՝ «ամերիկյանը», այն, ինչ դյուրում է, գայթակղում, տանում իր ետևից, հարցադրումների սրությամբ՝ ականա, բայց և զգալի չափով հեռացնելով ազգային ավանդույթի ավագանից: Եվ սա էլ է ճշգրիտ, առավել առարկայական ու տիրապետող հոգեբանության վկայություն:

Բեյրութում 1970-ին լույս տեսած առաջին «Անծանօթ հոգիներ» պատմվածքների ժողովածուն Հ. Կարապենցը որակում է որպես նախորդ, իր հաշվարկով քսան տարիների ընթացքում իր մեջ խմորված կուտակած գրական փորձառության անմիջական արդյունք, որն ամփոփում է 13 պատմվածք: Սկզբից եթե՛ նա հուշում է իր գրական նախասիրությունը որպես «փորձնական» ու նաև «փորձնապաշտ» արձակագիր: Մեր գնահատությամբ, «փորձնականը» գրողը դիտում է իբրև սկսնակի հոմանիշ,

մինչդեռ «փորձնապաշտը» գրական փորձարկումների հակում է: «Հասունութիւն,- հարցնում է նա «Գրողը եւ իր ճամբան» փորձագրությունում ու խոստովանում վաղվա իր ընթերցողին,- քա՛ւ լիցի: Պարզապէս հասել էր պահը դրսևորելու ներաշխարհիս քարանձաններում թաքնուած անծանօթներին, որոնք օրն ի բուն ինքնութիւն էին պահանջում»¹:

«Ներաշխարհի քարանձավները» մենության դրոշմի, հոգու տառապանքի քարեղեն վկայություններ-տիպարներ են, որ ուղեկցել են գրողին ստեղծագործական բոլոր կեանքներում: Ամերիկյան, արդեն կրկնակի օտարության մեջ է ապրում ու տառապում նաև «Որևէ տեղից մինչև այստեղ» պատմվածքի հերոս Արտաշես Սրմաքեշխանյանը կամ Արտավը, որն իր ողբերգականությամբ ու մահով հար և նման է «Վերջերս ո՛վ է գնացել Հալիֆաքս» ինքնակենսագրական գծով առանձնացող պատմվածքի հերոս Արմենին: Արտավը ծնունդով էջմիածնից է, ապրել է Երևանում, կնոջ և զավակի հետ աքսորվել Սիբիր, ապա՝ բռնել պանդխտության նոր ճամփան՝ դեպի Ամերիկա: Եկել է, բայց դա իր վերջնական հանգրվանը չէ: Մենության խորհուրդը, թվում է, նրան մերձեցնում է Վիլյամ Սարոյանի «Հէ՛յ, ով կա այդտեղ» մեկ գործողությամբ սարսռազին դրամայի հերոսներին, ինչի հուշարար բանալին կարծես երկուսի խորագրերի նմանությունն է:

Կարծես Վ. Սարոյանի աշխարհից «իջած» Արտավը հստակ լսում է հողի տնքոցը և իր հետ գրույցի բռնված գրողին հարցնում, թե արդյոք վերջինս զգո՞ւմ է այդ տնքոցը: «Մի՞ թե հոգիների տնքոցը բավական չէ»², - հետևում է «սարոյանական» պատասխանը: Հարցադրումը մեզ ակամա տանում է նաև դեպի Համաստեղի «Միջոն», որի հերոսը նույնպես ապշում էր հողի ներսից եկող և իրեն հասանելի ձայների զարմանահրաշ հաճախանքից:

«Իր ուղին կորցրած, մոլորված անցորդին»՝ Արտավին կյանքի հորձանուտ ալիքը նետել է մի օտար աշխարհ, սակայն նրա ականջներում տակավին շարունակում են հնչել հայրենի հողի, հայրենի ջրերի խոլ կանչերը: Նա չի դիմանում օրեցօր ուժգնացող ցավին: Եվ անձրևոտ մի գիշեր Արտավը շտապում է դեպի փոթորկված լիճը՝ հոգում կուտակված տառապանքը ջրի մեջ թաղելու համար:

«Փայտէ ձին» պատմվածքի երկու հայ հերոսներն անծանոթ հոգիներ են՝ տարբեր աշխարհների ծնունդ: Նրանք հանդիպում են Նյու Յորքի ցուցահանդեսներից մեկում. աղջիկը՝ մանրեաբան Սոնան, Հայաստանից եկած զբոսաշրջիկ, իսկ Հրանդը՝ ամերիկացի, արդյունաբերական

¹ Յակոբ Կարապենց, Երկու աշխարհ/ գրական փորձագրություններ, Ութրթաուն, 1992, էջ 75:

² Յակոբ Կարապենց, Անծանօթ հոգիներ, Վաշինգտոն, «Ատլաս», 1970, էջ 61:

նկարչության նոր բնագիծ որսացող հայ մարդ, որի արժանապատվության փնտրտուքը հայի մեջ ամերիկյան կեցության անվերջանալի հաշտության ձգտումն է: Մինչ Սոնային հանդիպելը նա՝ «ըմբոստ ամերիկացին», չէր գիտակցում, թե իր էության խորքերից հայության պարպումն արժանապատվության կորուստ է, որը ենթագիտակցորեն փորձում է ետ բերել՝ այդ բոլորը Գողգոթա կոչելով: Անակնկալ այդ հանդիպումից առաջ ո՞վ կարող էր նրան համոզել, թե Խորհրդային Հայաստանում ապրում են նաև «չռուսացած», ազգայինի ու մարդկայինի սահմաններում «դեզերող» հրաշալի մարդիկ: Իսկ Սոնան նյույորքյան իր ներկայությամբ հաստատում է միշտ կասկածամիտ Հրանդի համար, որ «Երևանը տուն է, օջախ, ուր մարդիկ ու տները, փողոցներն ու հրապարակները ձուլված են իրար հետ: ...Երևանը մի մեծ ընտանիք է, միանգամայն մարդկային ու բաբախուն»³: Հայրենիք վերադարձից առաջ Սոնան հասկանում է, որ ինքը և Հրանդը զգայազիրկ բևեռներից վերադառնում են բնության աշխարհին՝ թոթափելով բոլոր դիմակները, սրբապատկերի, պաշտամունքների դիմաց նախընտրելով մարդը, նրա հույզերի բնականությունը, սիրո բարձրագույն նախանշանները: Մարդը գտնել մարդու դիմաց՝ թեկուզ «փայտե նժույգ», ո՛չ թե իդեալը, ո՛չ թե սրբության սրբոցը: Մեր տպավորությամբ՝ փայտե, «տրոյական» ձին խորհրդանշում է 20-րդ դարում դավը, մարդկության, մարդկանց ու քաղաքակրթությունների միջև բացված վիհն ու կասկածամտությունը, որը գալիս է հնադարից, որը խորացնում է միմյանց դեմ լարված ականները, որը չի կարողանում ծաղկեցնել արմատախիլ եղած ծիլերի պարտեզը:

Մենությունից և ակամա ինքն իրենից փախչող, բայց ինքն իրեն որոնող Արմեն Վահանյանը հայտնվում է մի այլ քաղաքում («Մի այլ քաղաքում»): Իրեն պարտադրված նոր միջավայրում Արմենը փորձում է վանել տհաճ հիշողությունները, ըստ էության՝ վերագտնել իրեն: Բայց կյանքն ամենուր նույն հրամայականն ունի: Պանդոկի իր սենյակն է մտնում անձանոթ մի կին՝ սպասուհին, ով պատրաստ է առանց նախնական պայմանավորվածության տրվել նրան: Կինը խուսափում է իր մասին խոսել, նախընտրում է, որ երկուսով մնան «անձանոթ հոգիներ», առօրյա փնտրտուքով չփչացնեն իրենց այս կարճ, բայց հաճելի մտերմիկ շունչը: Կա անակնկալը, որը բորբոքում, զայրացնում է կնոջը, ծայրահեղության հասցնում նրան. Արմենի արտառոց, բարեկիրք վերաբերմունքը դեպի կինը: «Դուք բոլորդ էլ նո՛յնն էք, նո՛յն գազանը, միայն թե տարբեր դիմակներ էք

³ Յակոբ Կարապենց, Անձանոթ հոգիներ, Վաշինգտոն, «Ատլաս», 1970, էջ 19-20:

կրում»⁴։ Հերոսին դարձյալ պաշարում է մենության զգացումը, որին անհաղորդ է պարզ կինը՝ Քարոլը ։

Երկուսի միջև հոգեկան մերձեցումն ստացվում է, բայց՝ ոչ ավելին։ Արմեն Վահանյանը գիտակցում է, թե որքան մենավոր հոգիներ են կինը և ինքը։ Կինն էլ իր ապրումների սահմանն է հատել, որ ստիպում է կիսամերկ ու շփոթված հեռանալ սենյակից, քանի որ իր դիմաց ոչ թե հերթական հաճախորդ էր, այլ՝ հոգեկան հարուստ կերտվածքով մարդ, որի հետ կարելի ապրել, կենակցել, երեխաներ ունենալ, լցվել զգայական ու զգացական աշխարհով, մարդեղանալ։ Այդ ցանկությունը կարող էր ամբողջությամբ փոխել կնոջ կյանքը, որը պատրաստ չէր դրան։ Ահա և կնոջ կտրուկ հեռացումի բացատրությունը, որը տալիս է նույնքան շվարած հեղինակը։

Ամերիկացի դառնալը հայի սրտի տառապանքի, երկփեղկ մենության վրայով՝ մարդկության գտած «արդարադատ» բանաձևն է դառնում Հ. Կարապենցի պատմվածքներում («Վերջերս ո՞վ է գնացել Հալիֆաքս», «Անծանօթ հոգիներ»)։ Առաջինում նոր քաղաքակրթության շարունակականության մեջ զգացականը, այսինքն՝ ազգայինը, թուլացնում է ուժի տիրապետման, իրավունքի չափաբաժնի օտարների միջավայրում։ Երկփեղկ հայը նահանջում է, պատմությամբ անպաշտպան մնացած հայը ինքնասպան կարող է լինել, ինչպես ներաշխարհը հոգեհան ալիքի հորդումի դիմաց կորցրած, ծովամույն եղած Արմենը, որի տիպարի մեջ իր կենսագրական գծի հնարավոր տարբերակն է ներկայացնում հեղինակը՝ կարծես հուշելով ընթերցողին՝ այդպիսին կարող էր լինել հենց ինքը։ Միյուրոքում հայն ու հայկականը, սփյուռքահայը իր դատապարտվածությամբ, հարաբերական շղթա է։ Ի՛նչ օգուտ, որ առևտրական Ջորջը դեռ հարատևում է։ Նա իր բնույթով արդեն մարտնչող տիպը չէ, նա համակերպվածի բարդույթն ունի՝ ազգայինը, ոգին պարպելիք իր վճռով։

Մեր թվարկածներից երկրորդի հերոսը Սուրենյանն է՝ մեն-միայնակ ու անհանգիստ ներքնապես մեծ, «վիթխարի ու անվախճան» Նյու Յորքում։ Եվ միայն նա չէ, որ ապրում է առանձնության ողբերգական «ներքին կղզին»։ հեղինակը դուրս է բերում կերպարներն ազգային պատուհաններից։ Ողջ Ամերիկայի մայրուղիների, երկնաքերերի ժխորային աղմուկի մեջ Հ.

⁴ Յակոբ Կարապենց, Անծանօթ հոգիներ, Վաշինգտոն, «Ատլաս», 1970, էջ 100։

Կարապենցը անսում է նախ և առաջ «պզտիկ մարդոց» մենության արձագանքը:

Այստեղ նա գրեթե նույն ժամանակամիջոցում, անցյալ դարի 50-60-ական թթ., ստամբուլահայ Զահրատի պես վերստեղծում է մեծ քաղաքի ու փոքր մարդկանց հակադրական ելագծերը, ուր ներհյուսվում են աշխարհի մեջ բարության նոր սերմնացանները իրենց պարզությամբ: Մի էական տարբերությամբ՝ Զահրատի մոտ նրանք ժողովրդական խենթերն են՝ կիկոները, խարալամպոսները, «թաղիս բնակիչները» (և առաջին հերթին «Թաղ»⁵ քերթվածը, որի աշխարհագրական ծավալները թաղից հասնում են համայնք, համայնքից անցնում պոլսահայության դիմագծերի խտացումին, իսկ վերջին զուգահեռը, լայն ընդգրկումով, այլևս հայ ժողովուրդն է՝ աշխարհի ժողովուրդների համապատկերի խաղարկումներով)՝ հեզանքի, սիրո, կարեկցանքի ընդմեջեն: Ճիշտ նույն գեղարվեստական եղանակով է կառուցված Զահրատի «Չար բաներ» քերթվածը, որի մեջ մենք որսում ենք նաև ժողովրդի սթափ հիշողությունը:

Սուրենյանը խորհրդանշական առումով արտահայտում է հեղինակի պարզած մխիթարական ձեռքը՝ փորձելով սատար կանգնել ճակատագրի հարվածից իրենից ավելի կքած, խեղճացած ռուս Վլադիմիր Պիվավարովին, որի երթը փակուղի է իր համար, որի առջև գոց են Պետերբուրգի դարձի ճամփաները: Ինքը կնոջ հետ երագում էր օր առաջ այդ դարձը, իսկ հիմա կսկծում է կնոջ մահը Նյու Յորքում: Վշտի կրկնակի շերտ կա. երկու տարագիրներ են Սուրենյանը և միշտ գինով Վլադիմիրը, որ անել

⁵ Զարմացնում է մեծ քաղաքի գահրատյան բնութագրումով թշվառ հերոսների կերպարակերտման ընդհանուր հետևողական ուրվագծի պաշտպանությունը, որոնց սիրով փարված է հոգով ստամբուլահայ երգիչը.

Կը սիրեմ թաղիս բնակիչները
Անոնք լիալուսինը չտեսնելու չափ կոյր
Զեփիտին երգը չիմանալու չափ խուլ են
Համբ են անոնք
Իրենց ապագայի մասին խօսիլ չկարենալու չափ
Իսկ ես աղքատ լեզուովս կրնամ երգել Որփեռսի նման
Որովհետեւ պատկերներս ունին թաղեցիներուս
երագները
Գոյն գոյն երագները
Լոյս լոյս երագները...

(**Զահրատ**, Բանաստեղծություններ, հատոր Ա., (1960-1990), Ստամպուլ, 2006, էջ 15:

վշտի մեջ ապավինում է իր Հայաստան երկիրը գտնող ու չգտնող ընկերոջ պարզած ձեռքին: Իսկ ո՞ր է տարաբախտ դարձած տարագիրների տունն առաջնորդող կածանը՝ դեպի Պետերբուրգ կամ Հայաստան:

Ուրվականի նման տարեց Մարգարին հետապնդում է գերեզմանների հողավաճառ այցելուն՝ համանուն պատմվածքից, մինչդեռ հայր մեռնելու ցանկություն չունի: Կյանքի համար նա մաքառում է նաև ամերիկաներում: Ո՞վ գիտե Աստծո գաղտնիքները անմեկին: Ապաքինվելով Մարգարը լքում է դատապարտվածի, «պզտիկ» մարդկանց դրոշմը կրելու խաչը և վերահաստատում հայի ապրելու անկոտրում կամքը, որտեղ էլ որ լինի ինքը: Ի վերջո, նա ինքն է «ճանապարհում» օտար գերեզմաններում իր տեղն ապահովելու պատրաստ այցելուին:

Հ. Կարապենցի պատմվածքներում համակողմանիորեն բացվում է միայնակ ու փոքր, իր դժբախտ վիճակները ի զուր քրջանցել փորձող, բայց իր ներքին ազատագրման քայլին ընդառաջ գնացող մարդու հոգեկան դրաման բոլորովին նոր տեսանկյունից («Կարմիր քրջագետտով կինը»):

26 տարի Ամերիկայում գտնվող, բայց այդպես էլ ամերիկացի չդարձող Կիրեդ Աթանոսյանին տեղաբնակները «միստրը Աթանեշըն» են կոչում, Հարրի, աշխատանքում նրան գնահատում են՝ աշխատավարձն ու պաշտոնը պարբերաբար բարձրացնում: Կերպարը գծված է գրեթե համաստեղյան կերպարի ոճի եղանակով՝ հեզանքի և կարեկցանքի զուգահեռ խաղարկում, միաժամանակ անհամակերպության ու միապաղաղության ձանձրության ծնունդ խուլ ցավ: Նա գործվածքեղենի բարգավաճ հաստատության երկարամյա հաշվապահն էր՝ անթերի ու անբասիր, բարեխիղճ ու նվիրյալ, ինչպես կինն է շրջուն իմաստով հեզնում շարունակ՝ «աֆիսի մուկ», ասել է թե՛ գրասենյակում թուղթ կրծող:

Անձնական կյանք չունեի Կյուրեդը. կնոջ բոլոր քմահաճույքները անմոռնչ կատարելու, նյութական առօրյա անհագուրդ պահանջների մեջ լկտիության սահմանները վաղուց գլած-անցած դժգոհությունները տևաբար կուլ տվող ավանդապաշտ այս հայր իսկապես ցանկանում էր վայելել ընտանեկան ջերմություն ու քնքշանք, բայց գնահատության փոխարեն միշտ ստանում էր քամահրանք ու ատելություն: Որդին էլ, զուտ ամերիկյան բարքին հարազատ քայլով, դիրաւ հարստանալու տենդով բռնուած, վաղուց լքել է ծնողներին, հեռացել Ֆիլադելֆիա, հաջողակ բիզնես բացել: Միապաղաղ աշխատանքի դիմաց Կյուրեդը, ի վերջո, գնահատվում է, արժևորվում, նրան վստահում են, դարձնում գլխավոր հաշվապահ, բայց «նոր աշխարհի հին սերմնացանի» մեջ արթնանում է մարդու ներքին ազատության հախուռն ձգտումը՝ ազատագրվելու նրանցից, որոնք անհաղորդ են հոգեաշխարհի երջանկության իր բանաձևումին և նա դիմում

է աշխատանքից, հարազատների օտարացած աշխարհից հեռացումի վճռական քայլին:

Արգահատելի կինն իր հոգեաշխարհից դուրս է, նյութի տենդն է, այն, ինչ հանճարի վրձնախաղով քննել են Ալեքսանդր Պուշկինը («Ոսկե ձկնիկը») և Հովհ. Թումանյանը («Թմկաբերդի առումը»):

Հ. Կարապենցի ընթերցողի մոտ փոքր ու խեղճ հերոսի առաջացրած կարեկցանքն իր տեղը զիջում է խոր համակրանքին՝ ճակատագրով դատապարտված, բայց ինքնագնահատականի շնորհիվ բոլորովին նոր կենսակերպ որդեգրած ու անսպասելի վճիռ կատարած Կյուրեղի նկատմամբ:

Ամերիկայում ապրող երկրորդ թե երրորդ սերնդի հայ մարդու մեջ դեռ երազը շարունակում է հարատևել, ամեն ինչ չէ, որ զոհաբերված է ամենակուլ առօրյային: Պատմվածքի գլխավոր մտայնությունն այս է, որը փորձում է առանձնացնել արձակագիրը՝ երազի մեծությունը հակադրելով գործողությունների ընթացքին: Ամերիկայում երազի մեծությունը, թվում է, պիտի պահեն առաջինը հենց արվեստագետները: Բայց իրականում գեղեցիկի ճանապարհին «արևադարձային թռչունը» լքում է նաև ամենատաղանդավորներին: Ուսանելի մեկ օրինակ է բերում իր համալսարանական շրջանից համանուն պատմվածքի հայ հերոս Բժիշկ Արսենը, որի հանրակացարանային մտերիմ ընկերները օտարներ են՝ չինացի, ֆինն, ամերիկացի, շատ ուրիշներ, այլ կերպ՝ օտար հոգեբանական, օտար ազգային, այլևայլ ավանդական ու տարակարծ մտորումների շքահանղես, առձակատում, կատարյալի ձգտումից բխող հախուռն, երիտասարդական շփոթի անվերջանալի խառնարան: Գեղեցիկի որոնումը տանում է փակուղու նրանցից հրաշալի նկարիչ Ռիս Ջանսընին, որի և Արսենի ամենօրյա խորհրդածությունները կյանքի ու մարդու, երջանկության կամ մահվան, այսինքն՝ երազի փլուզման շուրջ, մտերմացրել են իրենց:

Ռիսը մեկ հսկա խարույկ է սարքում իր բոլոր նկարներից, այսինքն՝ հրաժարվում է նախկին ստեղծագործական իր որոնումներից ու ձգտում է նորովի փնտրել «արեւադարձային կապոյտ թռչունի» իր սահմանումը: Երեք տարիների փնտրտուքի արդյունքն ավելի քան ապշեցուցիչ է՝ այն իր կինն է՝ այլևս ու մեկընդմիջտ, իր Սելման՝ գեր, տափակ գլխով, բաց կարմիր լինդերով, թորշոմած ձեռքերով, մոխրագոյն մազերով եւ արհեստական ստամոքսով մի կին:

Խոհագրության ու գեղարվեստական տարածքների արանքում է սահում «Այստեղից մինչեւ յաւիտենականութիւն» պատմվածքի սյուժետային ընդհատումների կորագիծը: Ընթերցողի առջև գործողություններից վեր կանգնած արվեստագետն է, որը հանդգնում է աշխարհին պարզել, որ պետք

չէ վախենալ մահվան մշտական ու մշտնջենական ներկայությունից: «Արևի ջերմությունն զգալու», «հողի հեռավոր, քաղցրալուր», Համաստեղի գտած բառով՝ «ջղջղոցին», ունկն դնելու երջանկությունը գրողի համար ստեղծագործական տարրի բնաբուխ առկայությունն ու հաստատումն է, իսկ ահա նրա հերոսի համար ճշմարտությանն ու մահվանն ընդառաջ գնալու նախաքայլ է:

«Անծանօթ հոգիներ» ժողովածուն ավարտվում է խորհրդանշական «Մի մարդ եւ երկու շիրիմ» պատմվածքով՝ գրված 1966 թվականին: Այստեղ արդեն «անծանօթը» առօրյայից պոկված տարանջատ հոգիները չեն, ընդհակառակը, սիրո հորձանքն ընկած Վահեն, ազնվագույն Ինգրիդը, այս ամենին գումարենք նաև անցյալ դարի վաթսուհակամյակների ամերիկյան դեմոկրատական բեկումնային պատմության դրվագների և խորհրդային ձևալիի հայկական գրամշակութային աշխարհի հպանցիկ նկատելի չափով հրապարագրական մատուցման գրական եղանակները, որոնք Հ. Կարապենցի՝ մեզ քաջածանոթ ու հոգեհարազատ ոճավորումներն են, հատկանիշներ, որ, մեր տպավորությամբ՝ անցել են Վազգեն Շուշանյանից:

Գրողը բացահայտում է ազգային եւ համագային ծայրակետերի քննության երկու դաշտ. առաջինը քաղաքականն է: 1963-ին Միացյալ Նահանգները ցնցեց դեմոկրատ Նախագահ Ջոն Քենեդու անագորոյն սպանությունը, մարդ, որը, նախ, տառապանքի խորհրդանիշն էր: Ինքը ջանում էր «...ամոքել այդ ցաւը, ...խինդ բերել մանուկների չաքերին եւ երջանկութեամբ ողողել ապագայի ճանապարհը»⁶: Գրողին թվում էր, որ այդ Նախագահը միշտ մենակ էր իր տառապանքի մէջ: Նրա մահով բարության հունդը պակասեց մարդկության միջից:

Համագային որոնումի մեջ երկրորդ ծայրակետը բանաստեղծությունն ու նրա քուրմ Ե. Զարենցն է: Եթե Քենեդին բարության ուժն է, ապա բանաստեղծությունը միայն չարիք ծնող ուժի հակակշիռն է: Ընդունենք, որ կապակցման այս երկու ծայրակետերի միջև սպրդել է նկատելի չափով արհեստական ընկալման ծայրահեղությունը: Բայց տպավորում է երկու գերեզման-շիրիմների խաղարկումը. վաղվա գիտնականը գալիս է Հայաստան, նրան խորհրդային չարենցյան ժամանակից մնացուկ անվտանգության ուժերը երեսնականների շնչով անգամ 60-ական թվականներին անբարո պատնէշներ են կառուցում, ասել է թե՛ չարության ուժը Հայաստանում շարունակում է ավեր տեսնել բանաստեղծների գլխին:

⁶ Յակոբ Կարապենց, Անծանօթ հոգիներ, Վաշինգտոն, «Ատլաս», 1970, էջ 342:

Ե. Չարենցը ճշմարտության մասունքն է, նա ավելի կենսական ուժ է, քան սերը, նրա հզոր շնչից նահանջում է Ինգրիդը, ինչպես պատվիրում է Վահեն, որը հեռանում է դեպի բացարձակ Ե. Չարենցը: Գուցե դրա համար էլ Ե. Չարենցը գերեզման չունի, Ե. Չարենցը ներկայություն է: Մշտակա՛ն ներկայություն:

«Վերջին կայարանը» պատմվածքում ամերիկահայ գրողը գրեթե չարենցյան տիպի այդ «ազգային երազ»-երազանքի հաճախանքը լիովին է ապրում է պատանի Վաչիկ Արամյանի արքեստիպի շնորհիվ: Վաչիկի համար Երևանը հրապույր է, ձգողական կույր ներուժ, արյան հեռակա թվացող վազք: Ժամանակին ծնողների գորովագութ պատմությունները Հայաստանի, Արարատ-Մասիսի ու Արաքսի մասին այնքան էին բորբոքել տասնամյա պատանու երևակայությունը, որ նա համոզում է սևամորթ ընկերոջը, որի անունը շարունակվող երազի հանդուգն ու հեզնական տրամաբանությամբ Ջորջ Վաշինգտոն էր, թոցնել «մինչև վերջին կայարան» նշումով երկու տոմսակ, անցնել կամուրջներ ու ծովեր, հասնել հեքիաթի Երևան: Բայց գնացքը պատանիներին հասցնում է ընդամենը «վերջին կայարան», ոչ ավելին: Երազն ավարտվում է ամերիկյան տիրական ռեալությամբ, բայց առանց ցնցումի, առանց վերացական փիլիսոփայական գունավորումի: Նրանք հասել են Ջեֆերսոն,- ըստ Հ. Կարապետցի՝ «Հայկական Ամերիկայի» գեղարվեստական միջնաբերդը,- այստեղից զանգահարել են հայ պատանու մորը, որ գա զավակի ետևից. արկածն ավարտված է, տառապանքը՝ հաղթահարված: Սակայն Երևանը մնաց այդպես էլ «չնվաճված»:

Ինչ վերաբերում է ամերիկյան այս գողտրիկ նյութին, ընդգծենք, որ այն հաճելիորեն հիշեցնում է Վիլյամ Սարոյանի՝ անհամեմատ վաղ գրված նշանավոր «Գեղեցիկ, սպիտակ ձիու ամառը» պատմվածքը՝ «Իմ անունը Արամ է» ժողովածուից, ուր պատանեկան խանդավառության նույն ազգային խորքն է՝ հպանցիկ, բայց հետք ձգած սյուժետային կառուցումով: Արթնության ոգին է ընդհանուր ելակետ երկու այս գործերում. Վ. Սարոյանի պատանիներին հաջողվում է գրաստ դարձած ձիու առավոտներին տենչ հաղորդել, այն, ինչ ենթագիտակցորեն իրենց ռունգերում է, իրենց հայկականության խորքերում:

«Անձանօթ հոգիներ» պատմվածքների ժողովածուն գերազանց մեկնարկ էր, հզոր սկիզբ 20-րդ դարի երկրորդ կեսի հայ արձակի գրական խաչմերուկներում:

Ն. Միմոնյան

**Հայն ու հայկականն ամերիկյան միջավայրում. Հակոբ Կարապենցի
առաջին՝ «Անծանոթ հոգիներ» ժողովածուի հետքերով
Ամփոփում**

Սույն հոդվածում վերլուծվում և արժևորվում է սփյուռքահայ ականավոր գրող Հակոբ Կարապենցի «Անծանոթ հոգիներ» պատմվածաշարը: Վերլուծության մեջ բազմակողմանի բացահայտվում են տարագրության մեջ ապրող սփյուռքահայերի՝ օտար ափերում կրած դժվարություններն ու հայրենիքի հանդեպ ունեցած անմար կարոտը, նրանց հոգեբանությունն ու երկվորյունը, թշվառությունն ու ողբերգական կյանքը:

Н. Симонян

**Армянин и армянское в американском обществе: по следам первого сборника
Акопа Карапенца “Незнакомые души”**

Резюме

В данной статье анализируется и оценивается серия рассказов “Незнакомые души” знаменитого писателя армянской диаспоры Акопа Карапенца. В анализе всесторонне раскрываются трудности и тоска по родине, психология и двуличность, печаль и трагическая жизнь депортированных армян.

N. Simonyan

**Armenians in America: After the trails of Hakob Karapents' first
novel “Strange Souls”**

Summary

This article analyses and values the novel “Strange Souls” by Hakob Karapents, the famous Armenian writer. The analysis reveals the Armenians who live in diaspora, their hard life and longing for homeland, their inner world, their poverty and tragical fate.